ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի կողմից 2017թ. դեկտեմբերի 18-ի նիստում քննարկված «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, մասը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1	2	3	4	5
1.	**ՀՀ ԱԺ պատգամավոր Հ. Թովմասյան**	«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական	Նախագծի 2-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել որպես 2-րդ մաս:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է:**

		օրենք, հոդված 2, մաս 5			
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 4, մաս 5	Նախագծի հոդված 4-ի 5-րդ մասը կրկնում է «Ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի 3-րդ մասը. ուստի անհիմն կրկնություններից խուսափելու համար անհրաժեշտ է հղում կատարել Ընտրական օրենսգրքի համապատասխան հոդվածին:	**Ընդունվել է.** Նախագծի հոդված 4-ի 5-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «5. Հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստվում է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով:»:	**Ընդունվել է:**
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 6, մաս 1	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասից հանել «զբաղեցրած» բառը:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 8, մաս 2	Նախագծի 8-րդ հոդվածից հանել 2-րդ մասը:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 9, մաս 3	Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 9, մաս 5	Նախագծի 9-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Առանց փաստաթղթերի իրավասու մարմին բերման ենթարկված Սահմանադրական դատարանի դատավորը պետք է անմիջապես ազատ արձակվի նրա ինքնությունը պարզելուց հետո:»:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական	Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «70 տարին» բառերը փոխարինել «պաշտոնավարման տարիքը» բառերով:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

		օրենք, հոդված 12, մաս 1, կետ 2			
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 12, մաս 1, կետ 5	Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «նա «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված կարգով հրաժարական է ներկայացրել.»:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 12, մաս 2, կետ 2	Վերանայել նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը:	**Ընդունվել է.** Դրույթը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «2) պաշտոնավարման ընթացքում զբաղվել է քաղաքական գործունեությամբ.»:	**Ընդունվել է:**
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 14, մաս 1, կետ 8	Նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետից հանել «բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի» բառերը:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
		«Սահմանադրական	Նախագծի 17-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ	**Ընդունվել է.**	**Ընդունվել է:**

		դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 17, մաս 2	խմբագությամբ՝ «2. Սահմանադրական դատարանի դատավորի լիազորություններն ավարտվելու կամ պաշտոնավարման տարիքը լրանալու հիմքով լիազորությունները դադարելուց առնվազն վեց ամիս առաջ Սահմանադրական դատարանի նախագահը Սահմանադրական դատարանի դատավորի ընտրությունների գործընթացը կազմակերպելու նպատակով տեղյակ է պահում համապատասխանաբար Հանրապետության նախագահին, Կառավարությանը և Վճռաբեկ դատարանի նախագահին:»:	Նախագծի 17-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «2. Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնավարման ժամկետը կամ պաշտոնավարման տարիքը լրանալու հիմքով լիազորությունները դադարելուց առնվազն վեց ամիս առաջ Սահմանադրական դատարանի նախագահը Սահմանադրական դատարանի դատավորի ընտրությունների գործընթացը կազմակերպելու նպատակով տեղյակ է պահում համապատասխանաբար Հանրապետության նախագահին, Կառավարությանը եւ Վճռաբեկ դատարանի նախագահին:»:	
		«Սահմանադրական	Նախագծի 19-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետում	**Ընդունվել է.**	**Ընդունվել է:**

		դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 19, մաս 6, կետ 6	դատավորի աշխատակազմի կառուցվածքը առանձին նշելու կարիք չկա. այն դատարանի աշխատակազմի մաս է:	Նախագծի 19-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «6) իրականացնում է Սահմանադրական դատարանի աշխատակազմի ընդհանուր ղեկավարումը, հաստատում է աշխատակազմի կառուցվածքը եւ հաստիքացուցակը:»:	
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 24, մաս 2, կետ 2	Նախագծի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «2) դիմողի անունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը), հաշվառման (իրավաբանական անձի դեպքում՝ գտնվելու վայրի) կամ բնակության վայրի հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման հասցեից, եթե դիմողը հանդես է գալիս ներկայացուցչի միջոցով՝ դիմողի ներկայացուցչի անունը, հաշվառման կամ բնակության վայրի հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման հասցեից»:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 25,	Նախագծի 25-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «4) դիմողի հայեցողությամբ՝ գործին առնչվող այլ նյութեր»:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

		մաս 1, կետ 4			
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 25, մաս 2, կետ 4	Նախագծի 25-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի կարիքը բացակայում է, քանի որ Սահմանադրական դատարանը պետք է մուտք ունենա պետական ռեգիստրի գրառումներին:	**Ընդունվել է.** Նախագծի 25-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը՝ «4) իրավաբանական անձի պետական գրանցման կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը,»:	**Ընդունվել է:**
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 26, մաս 5	Նախագծի 26-րդ հոդվածի 5-րդ մասում «և այլ սոսկ» բառերը փոխարինել «կամ» բառով:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 30, մաս 1	Նախագծի 30-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1. Սահմանադրական դատարան ներկայացված դիմումը դիմողը կարող է հետ վերցնել մինչեւ գործի դատաքննությունն սկսվելը, բացառությամբ այն դեպքերի, երբ Սահմանադրական դատարան դիմելը դիմողի պարտականությունն է:»:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
		«Սահմանադրական դատարանի մասին»	Նախագծի 36-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝	**Ընդունվել է.** Կատարվել է	**Ընդունվել է:**

		Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 36, մաս 3	«3. Թարգմանիչների վարձատրության կարգը եւ չափը սահմանվում է Կառավարության որոշմամբ:»:	համապատասխան փոփոխություն:	
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 39, մաս 1	Նախագծի 39-րդ հոդվածի 1-ին մասում «զեկուցողը» բառից առաջ ավելացնել «գործով» բառը:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 42, մաս 1	Նախագծի 42-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1. Սահմանադրական դատարանը, իսկ գործը դատաքննության նախապատրաստելու կապակցությամբ նաև գործով զեկուցող դատավորը Սահմանադրական դատարանի նախագահի գիտությամբ իրավասու է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, դրանց պաշտոնատար անձանցից պահանջելու փաստաթղթեր, տեղեկություններ և այլ նյութեր, փորձաքննություններ, բացառությամբ իրավունքի հարցերով փորձաքննությունների:»:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության	Նախագծի 42-րդ հոդվածի 2-րդ մասում վերանայել «հանձնարարականները» բառի անհրաժեշտությունը:	**Ընդունվել է.** «Հանձնարարականները» բառը հանվել է:	**Ընդունվել է:**

		սահմանադրական օրենք, հոդված 42, մաս 2			
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 42, մաս 3	Նախագծի 42-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «3. Եթե սույն հոդվածի 2-րդ մասնում նշված ժամկետում Սահմանադրական դատարանի կամ գործով զեկուցող դատավորի պահանջների կատարումն անհնարին է, ապա պահանջի հասցեատերը պարտավոր է պահանջի կատարման ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան երեք օր առաջ Սահմանադրական դատարանին կամ զեկուցողին գրավոր իրազեկել ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության մասին: Սահմանադրական դատարանը կամ զեկուցող դատավորը կարող են երկարաձգել պահանջի կատարման ժամկետը կամ պահանջները վերահասցեագրել մեկ այլ մարմնի (անձի): Հակառակ դեպքում ուժի մեջ է մնում Սահմանադրական դատարանի կամ զեկուցողի արդեն իսկ սահմանած ժամկետը:»:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 50, մաս 4	Նախագծի 50-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ նախադասությունում դիմողից բացի նշել նաև պատասխանողին:	**Ընդունվել է.** Նախագծի 50-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «4. Նիստերի դահլիճից հեռացումը չի կարող կիրառվել տվյալ պահին ցուցմունք տվող վկայի նկատմամբ: Դատավարության կողմի	**Ընդունվել է:**

				նկատմամբ նիստերի դահլիճից հեռացում կիրառվելու դեպքում նիստը կարող է հետաձգվել սանկցիայի կիրառման ժամկետով:»:	
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 51, մաս 6	Վերանայել նախագծի 51-րդ հոդվածի 6-րդ մասը:	**Ընդունել է.** Նախագծի 51-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «6. Կողմերն իրենց բացատրությունների գրավոր տեքստը բացատրություններ տալուց հետո կարող են տրամադրվել Սահմանադրական դատարանին:»:	**Ընդունվել է:**
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 52, մաս 2	Նախագծի 52-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ եթե, չնայած ապացույցներ ձեռք բերելու համար ձեռնարկված միջոցներին, ձեռք բերված ապացույցները բավարար չեն գործով որոշում կամ եզրակացություն ընդունելու համար, և կողմին կարող է հայտնի լինել տվյալ գործով պարզելու ենթակա որևէ փաստ, ապա Սահմանադրական դատարանի նախաձեռնությամբ կամ մյուս կողմի միջնորդությամբ նա պարտավոր է հանդես գալ որպես վկա: Արդյոք սա ենթադրում է ՍԴ կողմից համապատասխան որոշման ընդունում:	**Ընդունվել է.** Նախագծի 52-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «2. Եթե, չնայած ապացույցներ ձեռք բերելու համար ձեռնարկված միջոցներին, ձեռք բերված ապացույցները բավարար	**Ընդունվել է:**

				չեն գործով որոշում կամ եզրակացություն ընդունելու համար, եւ կողմին կարող է հայտնի լինել տվյալ գործով պարզելու ենթակա որեւէ փաստ, ապա Սահմանադրական դատարանի պահանջով կամ մյուս կողմի միջնորդությամբ նա պարտավոր է հանդես գալ որպես վկա:»:	
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 53, մաս 3	Նախագծի 53-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն փորձագետը նիստը նախագահողի կողմից նախազգուշացվում է ակնհայտ կեղծ եզրակացություն տալու եւ եզրակացություն տալուց հրաժարվելու համար օրենքով սահմանված պատասխանատվության մասին: Անհասկանալի է եզրակացություն տալուց հրաժարվելու համար պատասխանատվության սահմանումը. հնարավոր է, որ փորձագետի կարողությունները չեն ներում, միթե այդ դեպքում նրան չպետք է հնարավորություն տրվի հրաժարվել փորձաքննություն անցկացնելուց:	**Ընդունվել է.** Նախագծի 53-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «3. Փորձագետը նիստը նախագահողի կողմից նախազգուշացվում է ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար օրենքով սահմանված պատասխանատվության մասին:»:	**Ընդունվել է:**
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի	Նախագծի 62-րդ հոդվածի 2-րդ մասում «հօգուտ» բառը փոխարինել «կողմ» բառով:	**Ընդունվել է.** Նախագծի 62-րդ հոդվածի 2-	**Ընդունվել է:**

		Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 62, մաս 2		րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «2. Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը եւ քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը:»:	
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 62, մաս 10	Նախագծի 62-րդ հոդվածի 10-րդ մասում անհասկանալի է Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում եւ Սահմանադրական դատարանի տեղեկագրում անհապաղ հրապարակելու պարտականություն սահմանելը:	**Ընդունվել է.** Նախագծի 62-րդ հոդվածի 10-րդ մասը վերաշարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «10. Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ եւ 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը	**Ընդունվել է:**

				կարող է ներկայացնել հատուկ կարծիք՝ որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաեւ հրապարակվում է Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում եւ Սահմանադրական դատարանի տեղեկագրում:»:	
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 68, մաս 6	Նախագծից հանել 68-րդ հոդվածի 6-րդ մասը. ԱԺ-ն այլևս օրենքները հանրաքվեի դնելու իրավասություն չունի:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության	Նախագծի 68-րդ հոդվածի 17-րդ մասում «մասերով» բառը փոխարինել «կետերով» բառով:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

		սահմանադրական օրենք, հոդված 68, մաս 17			
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 69	Նախագծի 69-րդ հոդվածի վերնագրում «Սահմանադրությանը համապատասխանությունը» բառերը փոխարինել «սահմանադրականությունը» բառով:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 69, մաս 3	Նախագծի 69-րդ հոդվածի 3-րդ մասում անհատական դիմումների ներկայացման վեցամսյա ժամկետը պայմանավորել ոչ թե դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելու, այլ ակտը ուժի մեջ մտնելու պահով:	**Ընդունվել է.** Նախագծի 69-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «3. Անհատական դիմումները կարող են Սահմանադրական դատարան ներկայացվել ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելուց՝ վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո:»:	**Ընդունվել է:**
	Պատգամավորն	«Սահմանադրական	Նախագծի 72-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ	**Ընդունվել է.**	**Ընդունվել է:**

	եր Արփինե Հովհաննիսյան Հրայր Թովմասյան	դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 72, մաս 6	խմբագրությամբ՝ «6. Սահմանադրական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի, ինչպես նաև իրավական ակտերի նախագծերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը ամբողջությամբ կամ մասամբ հակասող ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում նախագիծը շրջանառությունից հանվում է:»:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	
	Պատգամավորներ Արփինե Հովհաննիսյան Հրայր Թովմասյան	«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 73, մաս 5	Նախագծի 73-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «5. Սահմանադրական դատարանի կողմից Ազգային ժողովի ընդունած օրենքը կամ օրենքի վիճարկվող դրույթը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն ամբողջությամբ կամ մասամբ հակասող ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում օրենքը շրջանառությունից հանվում է:»:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
	Պատգամավոր Հրայր Թովմասյան	«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 77, մաս 13, կետ 2	Նախագծի 77-րդ հոդվածի 13-րդ մասի 2-րդ կետի գ) ենթակետը հանել:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
		«Սահմանադրական դատարանի մասին»	Նախագծի 78-րդ հոդվածի 4-րդ մասում Ազգային ժողովի կանոնակարգին հղումը անհրաժեշտ է, քանի որ Սահմանադրության 125-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝	**Ընդունվել է.** Կատարվել է	**Ընդունվել է:**

		Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 78, մաս 4	Հանրապետության նախագահի ընտրության կարգի մանրամասները սահմանվում են Ազգային ժողովի կանոնակարգով:	համապատասխան փոփոխություն:	
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 79, մաս 2	Նախագծի 79-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «2. Սույն հոդվածում նշված գործերով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 157-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով Սահմանադրական դատարան կարող է դիմել պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը:»: Ազգային ժողովի կանոնակարգին հղումը անհրաժեշտ է, քանի որ նշված մասի համաձայն՝ եթե պատգամավորի լիազորությունների դադարեցման մասին հարցի քննարկումը սկսվելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, Խորհուրդը պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին որոշում՝ 1) ընդունում է, ապա Ազգային ժողովի նախագահն այն 24 ժամվա ընթացքում ուղարկում է Սահմանադրական դատարան՝ նշելով Սահմանադրական դատարանում հարցի քննության ընթացքում որպես ներկայացուցիչ հանդես գալու իրավունք ունեցող անձի անունը, ազգանունը. 2) չի ընդունում, ապա Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին համապատասխան՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը կարող է ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հարցով դիմել Սահմանադրական դատարան:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 81, մաս 1	Նախագծի 81-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1. Հանրապետության նախագահի լիազորությունների կատարման անհնարինության վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարան կարող է դիմել Կառավարությունը՝ Հանրապետության նախագահի լիազորությունների կատարման անհնարինության մասին տեղեկություններին իրազեկ դառնալուց ոչ ուշ, քան 5 օր հետո:»	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 82, մաս 4	Նախագծի 82-րդ հոդվածի 4-րդ մասում «պարտականություններից» բառը փոխարինել «պարտականությունները» բառով:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
	Պատգամավորներ Արփինե Հովհաննիսյան Հրայր Թովմասյան	«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 82, մաս 10	Նախագծի 82-րդ հոդվածի 10-րդ մասում վերանայել նկատողության և խիստ նկատողության հետ կիրառվող աշխատավարձից զրկելու մասին կարգավորումը. Աշխատավարձից զրկելը ճիշտ չէ: Հաշվի առնելով միջազգային փորձը և ‹‹Դատական օրենսգիրք›› սահմանադրական օրենքի նախագծի համանման կարգավորումները՝ առաջարկում ենք հոդվածը խմբագրել հետևյալ կերպ. ‹‹Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարանը դատավորի նկատմամբ կարող է կիրառել	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

			հետեւյալ կարգապահական տույժերից որեւէ մեկը՝ 1) նախազգուշացում, 2) նկատողություն 3) խիստ նկատողություն»:		
	Պատգամավոր Հրայր Թովմասյան	«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 83, մաս 1	Նախագծի 83-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1. Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարան կարող է դիմել Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընդունված որոշմամբ, որում պետք է մատնանշվեն Սահմանադրության 164-րդ հոդվածի 9-րդ մասում եւ սույն օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հիմքերը:»	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 84, մաս 1	Նախագծի 84-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1. Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու մասին համաձայնություն տալու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարան կարող է դիմել գլխավոր դատախազը:»	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
		«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի	Նախագիծն ամբողջությամբ շարադրել նոր խմբագրությամբ (ներկայացված է նախագծում կատարված փոփոխությունների տեղեկանքում):	**Ընդունվել է.**	**Ընդունվել է:**

		Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք			
	ՀՀ ԱԺ պատգամավոր Արփինե Հոհաննիսյան	«Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 49	Նախագծի 10-րդ հոդվածը սահմանում է, որ Սահմանադրական դատարանի դատավորին տրամադրվում է դիվանագիտական անձնագիր: Միևնույն ժամանակ «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածը դիվանագիտական անձնագիր ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանում նշում է միայն Սահմանադրական դատարանի նախագահին: Առաջարկում ենք նախագծերի փաթեթը լրացնել «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով՝ դիվնագիտկան անձնագիր ստանալու իրավունք ունեցող անձանց շարքում նախատեսելով նաև Սահմանադրական դատարանի դատավորներին:	**Ընդունվել է.** Նախագծերի փաթեթը լրացվել է համապատասխան օրենքի նախագծով	**Ընդունվել է:**
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 40	Նախագծի 40-րդ 3-րդ մասը սահմանում է մանրամասն կարգավորումներ նախատեսում գրավոր ընթացակարգով գործի քննության ժամանակ մասնակիցներին ծանուցելու վերաբերյալ, մինչդեռ նման կարգավորումներ նախատեսված չեն բանավոր ընթացակարգով գործի քննության դեպքում: Առաջարկում ենք խմբագրել հոդվածը՝ նախատեսելով կարգավորումներ նաև բանավոր ընթացակարգով քննության դեպքերի համար:	**Ընդունվել է.** Նախագծի 40-րդ հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ « ***Հոդված 40. Սահմանադրական դատարանում գործերի դատաքննության***	**Ընդունվել է:**

				ընթացակարգը 1. Սահմանադրական դատարանում գործերի դատաքննությունն իրականացվում է ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ընթացակարգով՝ սույն օրենքին համապատասխան: 2. Գրավոր և բանավոր ընթացակարգով գործերի դատաքննության կանոնները սահմանվում են Սահմանադրական դատարանի աշխատակարգով՝ հիմք ընդունելով սույն օրենքի ընդհանուր պահանջները: 3. Գործի դատաքննությունը գրավոր կամ բանավոր ընթացակարգով իրականացնելու մասին դատաքննության մասնակիցները տեղեկացվում են գրությամբ՝ գործը քննության ընդունելու պահից եռօրյա ժամկետում,	

				որը պետք է պարունակի հետեւյալ տեղեկությունները. 1) գրավոր կամ բանավոր ընթացակարգով գործի դատաքննության մասին սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշման տեքստը, 2) այն ժամկետը, որի ընթացքում դատաքննության մասնակիցները պետք է ներկայացնեն իրենց գրավոր բացատրությունները եւ գործի այլ նյութեր, եթե դատաքննությունն իրականացվում է գրավոր ընթացակարգով, 3) գործի դատաքննության ժամանակ մասնակիցների իրավունքների եւ պարտականությունների մասին հակիրճ տեղեկություններ:»	
	ՀՀ	«Սահմանադրական	«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծի	**Ընդունվել է.**	**Ընդունվել է:**

	Կառավարություն	դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 2, մաս 4, հոդված 3, մաս 5, հոդված 76, մաս 3	(այսուհետ՝ Նախագիծ) 2-րդ հոդվածի 4-րդ մասում գործածվում է «աշխատակազմի աշխատակիցներ», 3-րդ հոդվածի 5-րդ մասում՝ «աշխատակազմի ծառայողներ, աշխատակիցներ», իսկ 76-րդ հոդվածի 3-րդ մասում՝ «աշխատակազմի աշխատողներ» արտահայտությունը: Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները՝ առաջարկում ենք գործածել մեկ միասնական տերմին:	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 4, մաս 5	Նախագծի 4-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող ավարտական փաստաթղթի բացակայության դեպքում հայերենին տիրապետելու հանգամանքը ստուգվում է Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության սահմանած կարգով, որը պետք է նախատեսի հայերենին տիրապետելու հանգամանքի ստուգման ողջամիտ, օբյեկտիվ չափորոշիչներ, ինչպես նաեւ գործընթացի վերահսկողության ընթացակարգեր: Նշենք, որ նման կարգ գործում է ՀՀ ԱԺ պատգամավորների՝ հայերենին տիրապետելու հանգամանքը ստուգելու համար: Առաջարկում ենք կամ ամրագրել, որ Սահմանադրական դատարանի դատավորի՝ հայերենին տիրապետելու հանգամանքը ստուգվում է այդ նույն կարգով, կամ Նախագծի 88-րդ հոդվածում նշել, թե երբ է կրթության եւ գիտության նախարարությունն ընդունելու նշված կարգը: Սույն առաջարկությունը բխում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներից:	**Ընդունվել է.** Նախագծի 4-րդ հոդվածի 5-րդ մասը փոփոխվել է:	**Ընդունվել է:**
		«Սահմանադրական դատարանի մասին»	Նախագծի 14-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում եւ 28-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկում ենք «ՀՀ» հապավումը	**Ընդունվել է.** Կատարվել են	**Ընդունվել է:**

		Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 14, մաս 2, կետ 1, հոդված 28, մաս 3	դարձնել «Հայաստանի Հանրապետության՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 11-րդ մասի կանոնները:	համապատասխան փոփոխություններ:	
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 60, մաս 1, կետ 3	Նախագծի 60-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «օրենքի» բառից հետո առաջարկում ենք լրացնել «75-րդ,» բառը, քանի որ այդ հոդվածով եւս նախատեսված է կարճման հիմք:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան լրացում:	**Ընդունվել է:**
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 86, մաս 5	Նախագծի 86-րդ հոդվածի 5-րդ մասի «Սույն հոդվածում նշված» բառերն առաջարկում ենք փոխարինել «Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հարցերի վերաբերյալ» բառերով, իսկ «գործերով» բառը՝ «գործերը» բառով:	**Ընդունվել է.** Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, հոդված 88	Նախագծի 88-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք փոխարինել «Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ» բառերով՝ համապատասխանեցնելով այն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին: Առաջարկում ենք նաեւ այդ հոդվածը ներառել համանուն 10-րդ գլխում:	**Ընդունվել է.** Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**

		««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին», ««Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին»	««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերնագրում առաջարկում ենք «փոփոխություններ» բառը փոխարինել «փոփոխություն» բառով, իսկ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» եւ ««Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերնագրերում՝ «փոփոխություն» բառը փոխարինել «փոփոխություններ» բառով՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:	**Ընդունվել է.** Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**

		ՀՀ օրենք			
		. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, հոդված 2	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածի «1-ին կետը» բառերն առաջարկում ենք փոխարինել «1-ին մասը» բառերով:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
		««Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք, հոդված 1	««Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի «(այսուհետ՝ Օրենք)» բառերն առաջարկում ենք հանել, քանի որ այդ նախագիծը «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին հղում այլեւս չի պարունակում:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
		««Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք, հոդված 2	Նույն նախագծի 2-րդ հոդվածի «օրվանից» բառն առաջարկում ենք փոխարինել «օրը» բառով՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնները:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

		ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 204.31, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, հոդված 184, 50, 94, 95, ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 48	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող փոփոխություններն ու լրացումն անհրաժեշտ է կատարել նաեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 204.31-րդ եւ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածներում: Ի դեպ, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին հղումներ են պարունակում նաեւ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի այլ հոդվածներ (50-րդ, 94-րդ, 95-րդ) եւ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածը: Ուստի, առաջարկում ենք Փաթեթը լրացնել համապատասխան նախագծերով՝ դրանցում լուծելով «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի սահմանադրական լինելը հավաստելու եւ հղումների ճշգրտման հարցերը:	**Ընդունվել է.** Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**
		«Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 6, «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենք, հոդված 22, «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման	Անհրաժեշտ է Փաթեթին կցել նաեւ «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածում, «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածում, «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածում, «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածում եւ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 144-րդ հոդվածում փոփոխություններ նախատեսող օրենքների նախագծեր, քանի որ դրանցում գործածվում է «սահմանադրական դատարանի անդամ» արտահայտությունը՝	**Ընդունվել է.** Նախագծին կից ներկայացվող փաթեթը համալրվել է նշված օրենքների նախագծերով:	**Ընդունվել է:**

		դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք, հոդված 3, «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 14, ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 144	համապատասխան հոլովաձեւերով:		